Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի
2026 թվականի
հուլիսի 03–ի N 3264 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի **առևտրի, սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-26) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:**

Թափուր պաշտոնն առաջացել է 2026 թվականի հունիսի 16-ին «Համայնքային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով:

Թափուր պաշտոնի անձնագիրը, մրցույթի թեստավորման փուլի համար կազմված հարցաշարերը, հարցազրուցի փուլի հարցաշարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի ցանկը ներկայացված են հետևյալ հղումով՝ https://abovyan-kotayk.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1350

Մրցույթին մասնակցելու համար դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք բնօրինակների հետ միասին, պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) գրավոր դիմում (**լրացվում է տեղում**),
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի, իսկ փախստականի դեպքում՝ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն,
3) առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի (ատեստատ, դիպլոմ) պատճեն,
4) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն,
5) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բոլոր լրացված էջերով,
6) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
7) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը (**լրացվում է տեղում**),
8) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ (**լրացվում է տեղում**),
9) հայտարարություն այն մասին, որ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ (**լրացվում է տեղում**),
10) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին (**լրացվում է տեղում**):

Դիմումը լրացնելու ժամանակ ներկայացված՝ անձը հաստատող, կրթությունը, զինվորական ծառայության հետ առնչությունը, աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են դիմողին՝ դիմումն ընդունելուց հետո:

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 332 000 (երեք հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ:

Մրցույթի համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **17.07.2026թ**.:

Մրցույթը կկայանա 2026 թվականի **օգոստոսի 06-ին ժամը 10:00-ին** Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի շենքում՝ 2-րդ հարկ, նիստերի դալիճում (ք. Աբովյան, Բարեկամության հր-1):

Փաստաթղթերն ընդունվում են Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմում (ք. Աբովյան, Բարեկամության հր-1, հեռ. 060 53-64-41, 060 53-64-27, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am) կամ Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունում (ք. Հրազդան, հեռ. 0223-2-73-01 էլ. հասցե kotayq@mta.gov.am) ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: